ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ-ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 2» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 26 նոյեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ֆինանսների նախարարի տեղակալ Է. Հակոբյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հարկաբյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր-Ենթածրագիր 2» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի նոյեմբերի 15-ի N 1797-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի

միջև «Հարկաբյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր – Ենթածրագիր 2» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի նոյեմբերի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ Բանկ) միջև «Հարկաբյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր – Ենթածրագիր 2» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի նոյեմբերի 1-ին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաները խորացնելու և հարկաբյուջետային կառավարումն ու կայունությունն ուժեղացնելու նպատակով:

2. Համաձայնագրով նախատեսվում է Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 89,469,000 (ութսունինը միլիոն չորս հարյուր վաթսունինը հազար) եվրո՝ Համաձայնագրով նախատեսված բյուջետային աջակցության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար:

3. Համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում Համաձայնագրի 4 ներքոնշյալ հավելվածները.

1) Հավելված 1՝ Ծրագրի նկարագրությունը,

2) Հավելված 2՝ Մարման ժամանակացույցը,

3) Հավելված 3՝ Վարկային միջոցների առհանումը,

4) Հավելված 4՝ Ծրագրի իրականացումը և այլ հարցեր:

4. Ֆինանսների նախարարության՝ Համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ տեղեկանք-հիմնավորման համաձայն՝

1) Համաձայնագրի վավերացման նպատակահարմարությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի և Կառավարության՝ 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2323-Ն որոշման կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ,

2) Համաձայնագիրը կազմված է 3 հիմնական բաղադրիչներից՝

ա. հարկաբյուջետային, պետական պարտքի և ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականության բարելավում և ամրապնդում, ինչպես նաև համապատասխան ենթակառուցվածքների ներդրում,

բ. պետական արժեթղթերի թողարկման և կառավարման շրջանակի ու փողի շուկաների ենթակառուցվածքի ամրապնդում,

գ. ֆինանսական գործիքների և ներդրողների բազայի ընդլայնում և կորպորատիվ կառավարման ու թափանցիկության բարձրացում:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

5.1. մարել Վարկի մայր գումարը 12 տարում (հոդված II, բաժին 2.01, կետ «բ»),

5.2. վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են առհանված և չվճարված վարկի մայր գումարի դիմաց (հոդված II, բաժին 2.02),

5.3. վճարել պարտավորավճար՝ տարեկան 0.15%-ի չափով, որը հաշվեգրվում է Վարկի ամբողջ գումարի վրա (հանած ժամանակ առ ժամանակ առհանվող գումարները) (հոդված II, բաժին 2.03),

5.4. վճարել Վարկի տոկոսագումարները և այլ վճարներ կիսամյակային պարբերականությամբ՝ յուրաքանչյուր տարվա մարտի 15-ին և սեպտեմբերի 15-ին (հոդված II, բաժին 2.04),

5.5. մարել Վարկային հաշվից առհանված՝ վարկի մայր գումարը Համաձայնագրի 2-րդ հավելվածի դրույթների համաձայն (հոդված II, բաժին 2.05),

5.6. ապահովել, որ Վարկային միջոցներն օգտագործվեն Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով՝ Համաձայնագրի դրույթների համաձայն (հոդված III, բաժին 3.01),

5.7. կատարել Համաձայնագրի 4-րդ հավելվածում սահմանված բոլոր պարտավորությունները կամ ապահովել դրանց կատարումը (հոդված IV, բաժին 4.01),

5.8. Բանկին ներկայացնել կամ ապահովել, որ Բանկին ներկայացվեն բոլոր այն հաշվետվություններն ու տեղեկությունները, որոնք Բանկը ողջամտորեն կպահանջի՝

1) համաֆինանսավորման միջոցների և դրանց օգտագործման վերաբերյալ,

2) Ծրագրի իրականացման, այդ թվում՝ թիրախների ապահովման և Քաղաքականության գործողությունների իրականացման վերաբերյալ (հոդված IV, բաժին 4.02):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հարկաբյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր-Ենթածրագիր 2» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

26 նոյեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1761